ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.12.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/253

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Նորք-7» ՍՊԸ-ի տնօրեն Գ. Դանիելյանի (պետական ռեգիստրի գրանցման վկայական թիվ 282.110.02807),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.12.2020թ. թիվ 26/26-1/17998-2020 գրությամբ «Նորք-7» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը Երևանի քաղաքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 25.11.2020թ. թիվ 01/61-23161 գրության հիման վրա 04.12.2020թ. թիվ 26/26-1/17998-2020 գրությամբ նախաձեռնել է «Նորք-7» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն)

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Նորք-7» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Նորք-7» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/253 ընթացակարգի շրջանակներում 09.12.2020թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր տնօրենի մասնակցությունը, ով նիստի ընթացքում հայտնել է, որ Ընթացակարգի 1-ին փուլում 1-ին չափաբաժնի մասով հայտ ներկայացնելու համար աշխատակիցներին իր կողմից լիազորագիր չի տրվել, վերջիններս հայտին կցել են այլ լիազորագիր, որում նշված չի եղել ընթացակարգի ծածկագիրը և հայտը մերժվել է:

3. **<u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Երևանի քաղաքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 25.11.2020թ. թիվ 01/61-23161 գրությամբ հայտնել է որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՀՄԱՊՁԲ-20/6» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում թվով 10 չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել «Նորք-7» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Մասնակից):

Գնահատող հանձնաժողովը Մասնակցի հայտը գնահատելիս արձանագրել է թվով 10 չափաբաժինների մասով անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ և օրենքով սահմանված կարգով Մասնակցին առաջարկել շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Մասնակցի կողմից սահմանված ժամանակահատվածում ներկայացվել են թվով 9 չափաբաժինների մասով շտկված փաստաթղթերը և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրից (հավելված 1.1) հանվել են 1-ին չափաբաժինը՝ իր տեխնիկական բնութագրով:

Հաշվի առնելով, որ Մասնակիցը խախտել է հրավերով ստանձնած պարտավորությունը, գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն

որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով, մերժել է մասնակցի հայտը՝ 1-ին չափաբաժնի մասով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/253 ընթացակարգի շրջանակներում 09.12.2020թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **<u>ՍՑ-ՆԳ-2020/253 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2020/253 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Արցախի Հանրապետությունից Երևան ժամանած ընտանիքներին /անձանց/ պատերազմ մեկնած անձանց ընտանիքներին և վիրավոր զինվորների ընտանիքներին սոցիալական աջակցություն տրամադրելու նպատակով սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ՀՄԱՊՁԲ-20/6» ծածկագրով հրատապ մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Նորք-7» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.11.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Նորք-7» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված դիմում-հայտարարությունը (հավելված 1) հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, լիազորագրի բովանդակությամբ հստակեցված չէ, թե ում կողմից կազմակերպվող և ինչ տեսակի գնման ընթացակարգի է մասնակցում, իսկ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (հավելված 1.1) «ֆիրմային անվանումը» սյունակում նշված է կազմակերպության անվանումը /պետք է նշվի այն ֆիրմային անվանումը ով արտադրում է տվյալ ապրանքը/:

3. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ առաջարկելով մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4 Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 18.11.2020թ. www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի

(հետայսու նաև՝ Համակարգ) միջոցով ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.11.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Նորք-7» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են շտկման ենթակա փաստաթղթերը, սակայն Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրից (հավելված 1.1) ամբողջությամբ հանվել է 1-ին չափաբաժինը՝ իր տեխնիկական բնութագրով, սակայն «Նորք-7» ՍՊԸ-ի կողմից armeps էլեկտրոնային համակարգի միջոցով 12.11.2020թ.-ին ներկայացրած հայտով հավելված 1.1-ով վերջինս մասնակցել է ընթացակարգի 1-ին չափաբաժնին՝ առաջարկելով նվազագույն գնային առաջարկ:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրության համաձայն՝ որոշում է կայացրել մասնակցի հայտը՝ 1-ին չափաբաժնի մասով, անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 04.12.2020թ. թիվ 26/26-1/17998-2020 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 25.11.2020թ. թիվ 01/61-23161 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում սպանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***<u>հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:</u>***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես, Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Արցախի Հանրապետությունից Երևան ժամանած ընտանիքներին /անձանց/ պատերազմ մեկնած անձանց ընտանիքներին և վիրավոր զինվորների ընտանիքներին սոցիալական

աջակցություն տրամադրելու նպատակով սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ՀՄԱՊՁԲ-20/6» ծածկագրով հրատապ մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Նորք-7» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.11.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Նորք-7» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված դիմում-հայտարարությունը (հավելված 1) հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, լիազորագրի բովանդակությամբ հստակեցված չէ, թե ում կողմից կազմակերպվող և ինչ տեսակի գնման ընթացակարգի է մասնակցում, իսկ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (հավելված 1.1) «ֆիրմային անվանումը» սյունակում նշված է կազմակերպության անվանումը /պետք է նշվի այն ֆիրմային անվանումը ով արտադրում է տվյալ ապրանքը/:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ առաջարկելով մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 18.11.2020թ. www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետ նաև՝ Համակարգ) միջոցով ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.11.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Նորք-7» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են շտկման ենթակա փաստաթղթերը, սակայն Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրից (հավելված 1.1) ամբողջությամբ հանվել է 1-ին չափաբաժինը՝ իր տեխնիկական բնութագրով, սակայն «Նորք-7» ՍՊԸ-ի կողմից armeps էլեկտրոնային համակարգի միջոցով 12.11.2020թ.-ին ներկայացրած հայտով հավելված 1.1-ով վերջինս մասնակցել է ընթացակարգի 1-ին չափաբաժնին՝ առաջարկելով նվազագույն գնային առաջարկ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրության համաձայն՝ որոշում է կայացրել մասնակցի հայտը՝ 1-ին չափաբաժնի մասով, անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ ***<u>հայտերի բացման և գնահատման նիստում ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է</u>***

<u>նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:</u>

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում <u>արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,</u> ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով <u>ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***<u>Հակառակ դեպքում տվյալ</u>*** մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը, Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվելով անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սահմանված ժամկետում ներկայացրել է շտկման ներկայացված փաստաթուղթը, սակայն շտկման արդյունքում ներկայացված փաստաթղթում կրկին արձանագրվել է անհամապատասխանություն, մասնավորապես՝ Հավելված 1.1-ից ամբողջությամբ հանվել է 1-ին չափաբաժինը՝ իր տեխնիկական բնութագրով:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ «Նորք-7» ՍՊԸ-ն «ԵՔ-ՀՄԱՊՁԲ-20/6» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, և առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.12.2020թ. թիվ 26/26-1/17998-2020 գրությամբ «Նորք-7» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Նորք-7» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**